ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4
ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության
մարզային հանձնաժողովի նիստի

05.06.2020թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամներ, մարզի զբաղվածության տարածքային կենտրոնների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, ծրագրերի տարածաշրջանային խորհրդատուներ, հրավիրյալներ:

Օրակարգում՝

1. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշման Հավելված 21-ի մեջ կատարված փոփոխությունների և 2021թ. համար ծրագրային աշխատանքների կազմակերպման մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի պահանջներին համապատասխան ՀՀ Լոռու մարզի մի շարք համայնքներում իրականացվող ծրագրերի մշտադիտարկումների արդյունքների մասին.

   ա/ Գուգարքի տարածաշրջանում /Անտառամուտ, Դարպաս, Եղեգնուտ և Ձորագետ համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Վանաձորի ՋՏԿ տնօրեն Արա Առաքելյան, խորհրդատու Վալերի Ջաղինյան/

   բ/ Սպիտակի տարածաշրջանում /Ծաղկաբեր, Սարալանջ, Հարթագույղ համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Սպիտակի ՋՏԿ տնօրեն Գագիկ Ստեփանյան, խորհրդատու Գայանե Բոջուկյան/

   գ/ Թումանյանի տարածաշրջանում /Ախթալա, Չկալով համայնքներ/ իրականացվող ծրագրերի ծրագրերի մասին /Այավերդու ՋՏԿ տնօրեն Նոնոն Անտաշյան, խորհրդատու Իրինա Գրիգորյան/

   դ/ Ստեփանավանի տարածաշրջանում /Լոռի Բերդ, Գյուլագարակ համայնքներ/ իրականացվող ծրագրերի ծրագրերի մասին /Ստեփանավանի ՋՏԿ տնօրեն Մկրտիչ Գրիգորյան, խորհրդատու Վաղարշակ Եղիազարյան/

3. ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ և Անտառամուտ համայնքներում 01.04.2020թ.-ից սկսված և ավարտված, Դարպաս և Ձորագետ համայնքներում շարունակվող ծրագրերի մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան/

4. ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղ համայնքում 04.05.2020թ.-ից սկսված ծրագրի դադարեցման մասին:

/Զեկ.՝ Սպիտակի ՋՏԿ տնօրեն Գագիկ Ստեփանյան/

5. Քննարկումներ.

   ա/ ՀՀ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանից ստացված ծրագրերից մեկ լավագույն առաջարկի ընտրություն:

   բ/ Armenian Tree Project կազմակերպության կողմից շուրջ 100 մարդու ներգրավմամբ Տաշիրի տարածաշրջանում /1. Միխայլովկա համայնք մակերեսը - 42 հա

   2. Տաշիր բաղաք 1 տեղամաս մակերեսը - 33 հա

   3. Տաշիր բաղաք 2 տեղամաս մակերեսը - 25 հա/

խնամքի մոտ 3 շաբաթյա աշխատանքների իրականացում /նախատեսվում է մաքրել 200,000 – 220,000 հատ տնկիների բնաբաժակները խոտածածկից/:

/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահ Գայանե Մարկոսյան,
նախագահի տեղակալ Արա Առաքելյան/

6. Այլ հարցեր:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Արձանագրել՝

1.1. ՀՀ Լոռու մարզի Անտառամուտ համայնքի կողմից 01.04.2020թ.-ից մինչև 30.05.2020թ. իրականացված «Անտառամուտ համայնքի ակումբի շենքի վերանորոգման աշխատանքներ» ծրագրի ավարտը:

1.2. ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի կողմից 01.04.2020թ.-ից մինչև 30.05.2020թ. իրականացված «Եղեգնուտ համայնքի գյուղամիջյան հուշաղբյուրի վերանորոգման, խաղահրապարակի վերակառուցման, տաղավարի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ավարտը:

2. Դադարեցնել ՀՀ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի Հարթագյուղի համայնքապետարանի կողմից 04.05.2020թ. – 30.06.2020թ. իրականացվելիք «Հարթագյուղ համայնքի Սուրբ Հովհաննես տանող ճանապարհի խճալցում և բարեկարգում» ծրագիրը՝ բացասական եզրակացության և աշխատանքների կատարողական չներկայացնելու հիմքով:

3. Դրական գնահատել «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի թվով երեք անտառտարածքներում առաջարկվող անտառվերականգնման ծրագրերը:

Հանձնարարվեց՝

Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

1. Ներկայացնել ավարտված ծրագրերի մասին ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ:

2. Համապատասխան գրություններ նախապատրաստել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝

2.1. Հարթագյուղի համայնքապետարանի կողմից 04.05.2020թ. – 30.06.2020թ. իրականացվելիք «Հարթագյուղ համայնքի Սուրբ Հովհաննես տանող ճանապարհի խճալցում և բարեկարգում» ծրագրի դադարեցման մասին:

2.2. Միջնորդություն ներկայացնել «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի թվով երեք անտառտարածքներում առաջարկվող ծրագրերի մասին:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/